«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

Արձանագրություն թիվ 4
17.12.2021թ.

1. Համալսարանում կարճաժամկետ ծրագրերի իրականացման հարցերի, հնարավորությունների և խնդիրների վերաբերյալ.

ՀԱԱՀ Գիտական խորհուրդը միաձայն որոշեց հաստատել ՀԱԱՀ կարճաժամկետ ծրագրերի իրականացման հարցերի, հնարավորությունների և խնդիրների վերաբերյալ որոշման նախագիծը.

1. Հանձնարարել ՀԱԱՀ բոլոր ֆակուլտետների դեկաններին, ամբիոնների վարիչներին.

ա. մեկամսյա ժամկետում վերանայել առկա կարճաժամկետ դասընթացների բովանդակությունը և առաջարկել նոր դասընթացներ, շեշտը դնել ավելի կարճ/ 1 շաբաթյա/ դասընթացների վրա:

բ. մեկամսյա ժամկետում ներկայացնել նորաբաց լաբորատորիաների լիարժեք շահագործմանը նպաստող անձնակազմի վերապատրաստման կարիքները՝ նոր կարճաժամկետ դասընթացների անխոչնդոտ ընթացքը ապահովելու համար:

2. Հանձնարարել Ընդհանուր քիմիայի, Բուսաբուծական մթերքների վերամշակման տեխնոլոգիաների, Անասնաբուծական մթերքների վերամշակման տեխնոլոգիաների ամբիոններին մեկամսյա ժամկետում ներկայացնել Սննդի արդյունաբերության տեխնիկ-լաբորանտի որակավորման դասընթացի մոդուլները:

3. Հանձնարարել ՀԱԱՀ Սիսիանի մասնաճյուղի և Շիրակի ակադեմիկոս Մ.Գ. Թումանյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջի տնօրեններին մեկամսյա ժամկեըում ներկայացնել կարճաժամկետ դասընթացների մոդուլներ իրենց ղեկավարած հաստատություններում գործող լաբորատորիաների հնարավորության սահմաններում:

4. Հանձնարարել Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի տնօրենին, կարճաժամկետ դասընթացները տեղադրել կայքում, դասընթացների տեսական մասը ներբեռնել Moodle համակարգ:

2. Անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետի ամբիոններում ուսումնական գործընթացի կազմակերպման վիճակի և խնդիրների վերաբերյալ.

2.1. Ընդունել ի գիտություն

2.2. Հանձնարարել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Կ. Մինասյանին, ԱԲԱՖ դեկան Ա. Աբովյանին մեկ շաբաթյա ժամկետում կազմել

աշխատանքային խումբ՝ անատոմիայի ամբիոնի թանգարանային նմուշների պիտանելիությունն ու օգտագործման անվտանգությունը պարզելու նպատակով:

2.3.Հանձնարարել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Կ. Մինասյանին.

- Համալսարանի աշխատանքային պլանը վերանայել և ներկայացնել մինչև 2022թ հունվարի 15-ը,

ԱԲԱ ֆակուլտետի 2022թ-ի աշխատանքային պլանում ներառել օտար լեզվով կազմակերպվող դասընթացների մատուցման, պրոֆեսորադասախոսական անձնակազմի՝ նորագույն տեխնոլոգիաների, օտար լեզվի տիրապետման ուղղությամբ վերապատրաստումների կազմակերպման հարցերը, թանգարանային նմուշների պիտանելիությունն ու օգտագործման անվտանգությունը պարզելու նպատակով ստեղծվող հանձնախմբի աշխատանքները:

3. Դասագրքերի, ուսումնական ձեռնարկների, մեթոդական ուղեցույցերի հրատարակման, ինչպես նաև հրատարակված աշխատությունները որպես ուսումնական ձեռնարկ ճանաչելու հարցի վերաբերյալ.

3.1.«Էկոլոգիական անվտանգություն» ուսումնական ձեռնարկը (հեղ. Վ.Ս. Հարությունյան, Կ.Շ. Սարգսյան, Լ.Գ. Մաթևոսյան) երաշխավորել հրատարակման:

3.2.«Բնական մենաշնորհի պետական կարգավորման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» մենագրությունը (հեղ. Մ.Է. Սողոմոնյան) երաշխավորել հրատարակման:

3.3.«Գյուղատնտեսական արտադրանքի իրացման, ներմուծման և արտահանման հիմնախնդիրների և դրանց լուծման ուղիների վերաբերյալ թեմաներով ավարտական աշխատանք կատարելու համար /ՀՀ-ի, մարզերի, ԱՊՀ ձեռնարկությունների օրինակով/» մեթոդական ուղեցույցը երաշխավորել հրատարակման:

3.4.«Էլեկտրատեխնիկա և էլեկտրոնիկայի հիմունքներ» առարկայի լաբորատոր և գործնական աշխատանքներ կատարելու համար մեթոդական ցուցումը (հեղ. Կ.Պ. Հակոբյան, Ս. Խառատյան) երաշխավորել հրատարակման:

3.5. «Օրգանական պարարտանյութերի պատրաստման նոր տեխնոլոգիաներ և մեքենասարքավորումներ» մենագրությունը (հեղ. Ս.Ե. Մարգարյան) երաշխավորել հրատարակման:

3.6. «Խաղողի բերքատու այգու խնամքի ուղեցույց»-ը (հեղ. Ա.Ի. Օհանյան, Բ.Ա. Գրիգորյան) երաշխավորել հրատարակման:

3.7. «Բույսերի իմունիտետ» դասագիրքը (հեղ. Գ.Վ. Ավագյան) երաշխավորել հրատարակման:

3.8. «Տնկարանի հիմնում և կառավարում» ուսումնական ձեռնարկը (հեղ. Է. Ստեփանյան, Ա. Ասատրյան) երաշխավորել հրատարակման:

3.9. «Պտղատու ծառատեսակների վնասակար էնտոմոֆունա ու պայքար» ուսումնական ձեռնարկը (հեղ. Ա.Ջ. Տեր-Գրիգորյան, Ա.Ա. Սարգսյան) երաշխավորել հրատարակման:

3.10. «Պտղատու ծառատեսակների հիվանդություններ և պայքար» ուսումնական ձեռնարկը (հեղ. Ա.Ջ. Տեր-Գրիգորյան, Ս.Ս. Սարգսյան) երաշխավորել հրատարակման:

3.11. «Ընկուզավոր պտղատեսակների այգիների հիմնում և կառավարում» ուսումնական ձեռնարկը (հեղ. Ռ.Բ. Իշխանյան, Գ.Գ. Հարությունյան) երաշխավորել հրատարակման:

3.12. «Անտառագիտության և ագրոէկոլոգիայի» ամբիոնի կողմից ներկայացված աշխատությունները ճանաչել որպես ուսումնական ձեռնարկներ.

1) «Բնական ռեսուրսների կառավարում» (հեղ. Մ. Մարկոսյան, Լ. Սիմոնյան),

2) «Ներառական գյուղական հասարակություն» (հեղ. Ա. Մկրտչյան, Լ. Մաթևոսյան),

3) «Կլիմայակայուն խելամիտ գյուղատնտեսություն» (հեղ. Ս. Թամոյան, Լ. Սիմոնյան),

4) «Շրջանաձև տնտեսություն» (հեղ. Գ. Աթոյան):

4. Քրիստինե Սարգսի Խանամիրյանի «Շաքարի բնական փոխարինիչների կիրառմամբ ֆունկցիոնալ նշանակության հացաբուլկեղենի և ալրային հրուշակեղենի տեխնոլոգիաների մշակում» վերնագրով Ե.18.01 «Բուսական և կենդանական ծագման մթերքների վերամշակման և արտադրության տեխնոլոգիա» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի փոփոխության հարցի վերաբերյալ.

4.1. Քրիստինե Սարգսի Խանամիրյանի թեկնածուական ատենախոսության թեմայում կատարել փոփոխություն և հաստատել հետևյալ խմբագրմամբ «Շաքարի բնական փոխարինիչների կիրառմամբ հացաբուլկեղենի և հրուշակեղենի տեխնոլոգիաների մշակում»:

4.2. Թեկնածուական ատենախոսության գիտական ղեկավար հաստատել տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ Նարինե Գեղամի Հովհաննիսյանին:

5. Կարինե Աշոտի Տոնոյանի թեկնածուական ատենախոսության գիտական ղեկավարի փոփոխության հարցի վերաբերյալ.

Կարինե Աշոտի Տոնոյանի ԺՋ.00.01 «Անասնաբուժություն» մասնագիտությամբ «Շների լեյշմանիոզի տարածվածությունը Հայաստանի սահմանամերձ մարզերում և կանխարգելումը» վերնագրով թեկնածուական ատենախոսության գիտական ղեկավար հաստատել անասնաբուժական գիտությունների թեկնածու, դոցենտ Լիանա Հայկի Գրիգորյանին:

6. Համալսարանում իրականացված կառուցվածքային փոփոխությունների, կազմակերպչական որոշ հարցերի վերաբերյալ.

6.1. Հանձնարարել ստորաբաժանումների ղեկավարներին երկշաբաթյա ժամկետում ցուցանակների փոփոխման առաջարկություններ ներկայացնել աշխատակազմի ղեկավարին:

6.2. Հանձնարարել աշխատակազմի ղեկավար Լ. Մնացականյանին երկամսյա ժամկետում կազմել ցուցանակների ընդհանուր ձևաչափ և փոխել ստորաբաժանումների ցուցանակները: ՀԱԱՀ գլխավոր մասնաշենքում տեղադրել ցուցատախտակ՝ նշելով համալսարանի տարբեր ստորաբաժանումների (ֆակուլտետներ, ամբիոններ, լաբորատորիաներ և այլն) գտնվելու վայրերը:

7. Մասնագիտական կողմնորոշման աշխատանքների իրականացման վերաբերյալ.

Հանձնարարել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Կ. Մինասյանին և ամբիոնի վարիչներին՝ կազմակերպել մասնագիտական կողմնորոշման թիրախային աշխատանքներ WFP ցուցակում ընդգրկված դպրոցների աշակերտության հետ՝ աշխատանքներում ընդգրկելով նաև ուսանողներին:

8. Որակի ազգային կենտրոնի կողմից սպասվող մոնիթորինգային այցելության վերաբերյալ.

Հանձնարարել ՈԳԱ կենտրոնի տնօրեն Լ. Զաքարյանին և ստորաբաժանումների ղեկավարներին իրականացնել անհրաժեշտ աշխատանքներ և սեղմ ժամկետում պատրաստ լինեն ՈԱԿ-ի մոնիթորինգային խմբի այցելությանը:

ԳԻՏ. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Վ.Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ

ԳԻՏ. ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ.Վ. ԱՎԱԳՅԱՆ